ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Սովորողի ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային պայմաններից է**

1. Դասընկերոջ ախատանքի օրինակը
2. Հուզազգայական մթնոլորտը
3. Արտադասարանական պարապմունքը
4. Խիստ կարգապահությունը

2 **Որ արվեստագետն է համարվում Վաղ վերածնդի ժամանակաշրջանի ներկայացուցիչ**

1. Սանդրո Բոտիչելլի
2. Լեոնարդո դա Վինչի
3. Պաոլո Վերոնեզե
4. Ջոտտո դի Բոնդոնե

3 **Մանկավարժական փորձը վերաբերում է**

1. Հետազոտության մեթոդներին
2. Ուսումնական նպատակներին
3. Չափորոշիչային պահանջներին
4. Դիդակտիկ սկզբունքներին

4 **Ֆրանսիացի որ նկարիչը համարվեց կետանկարչության (պուանտելիզմ) հիմնադիրը**

1. Էդգար Դեգա
2. Ժորժ Սյորա
3. Մորիս Դենի
4. Կլոդ Մոնե

5 **Հովնաթանյան նկարչական գերդաստանի որ ներկայացուցիչն է պատկերել Եփրեմ կաթողիկոսի դիմանկարը**

1. Հովնաթան Հովնաթանյան (1725-1799)
2. Աղաթոն Հովնաթանյան (1816-1893)
3. Հակոբ Հովնաթանյան (1806-1881)
4. Նաղաշ Հովնաթան (1661-1722)

6 **Կերպարվեստի հիմնական արտահայտչամիջոց են հանդիսանում**

1. Գիծը, կետը, գույնը
2. Համաչափությունը, կառուցվածքը
3. Հեռանկարը, կրճատումը
4. Գուաշը, մատիտը, պաստելը

7 **Որն է համարվում թեմատիկ հորինվածքի հիմնական տարր**

1. Աշխատանքային նյութը
2. Աշխատանքի կոմպոզիցիան
3. Աշխատանքի կոլորիտը
4. Աշխատանքի չափը

8 **Նշվածներից հայկական որ եկեղեցին է համարվում բազիլիկ**

1. Խորանաշատ
2. Զվարթնոց
3. Տեկոր
4. Կարմրավոր

9 **Որն է համարվում Երևանի առաջին արձանը**

1. Ղուկաս Ղուկասյան
2. Ստեփան Շահումյան
3. Ներսոն Ստեփանյան
4. Խաչատուր Աբովյան

10 **Ով է Երևան քաղաքի առաջին արձանի հեղինակը**

1. Այծեմիկ Ուրարտու
2. Անդրեաս Տեր-Մարուքյան
3. Սերգեյ Մերկուրով
4. Հովհաննես Բեջանյան

11 **Ով է առաջին անգամ շրջանառության մեջ դրել Հելլենիզմ տերմինը**

1. Յոհան Դրոյզեր
2. Ջորջո Վազարի
3. Ալեքսանդր Մակեդոնացի
4. Բորիս Պիոտրովսկի

12 **Նշվածներից ով է եղել Պոլսի գեղարվեստի ուսումնարանի հիմնադիրներից և նույն ուսումնարանի քանդակի բաժնի ղեկավարը**

1. Երվանդ Ոսկան
2. Հովսեփ Փուշման
3. Էդգար Շահին
4. Հովսեփ Մանաս

13 **Ով է հանդիսանում նոր շրջանի հայ կերպարվեստում պատմական ժանրի հիմնադիրը**

1. Վարդգես Սուրենյանց
2. Եղիշե Թադևոսյան
3. Գևորգ Բաշինջաղյան
4. Փանոս Թերլեմեզյան

14 **Որտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Քաոս» ստեղծագործությունը**

1. Դրեզդենի պատկերասրահ
2. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահ
3. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահ
4. Հայաստանի ազգային պատկերասրահ

15 **Ով է եղել Գեղարվեստի ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա) հիմնադիրը**

1. Ասքանազ Մռավյան
2. Արա Սարգսյան
3. Ալեքսանդր Մյասնիկյան
4. Մարտիրոս Սարյան

16 **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների համակարգ չէ**

1. Կարողությունների համակարգ
2. Արժեքային համակարգ
3. Բովանդակային համակարգ
4. Գիտելիքների համակարգ

17 **Հելլենիստական շրջանում որ աստծուն է նվիրված եղել Գառնու հեթանոսական տաճարը**

1. Վահագն
2. Միհր
3. Խալդի
4. Արամազդ

18 **Նշվածներից որը չի համարվում հանրակրթական դպրոցի ուսումնական գործընթացի փուլ**

1. Միջին
2. Կրտսեր
3. Ավագ
4. Տարրական

19 **Որ աստծուն է նվիրված եղել ուրարտական Մուսասիրի տաճարը**

1. Թեյշեբա
2. Շիվինի
3. Տուրանի
4. Խալդի

20 **Ով է եղել Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի հեղինակը**

1. Մարտիրոս Սարյան և Հակոբ Գյուրջյան
2. Դմիտրի Մերկուրով և Արա Սարգսյան
3. Փանոս Թերլեմեզյան և Նիկողայոս Մառ
4. Հակոբ Կոջոյան և Ալեքսանդր Թամանյան

21 **Կերպարվեստ առարկայի ծրագրի տվյալ բաժինն ապահովում է գեղարվեստական արտահայտչական միջոցների ընդհանրացված ըմբռնման ձևավորում**

1. Արվեստի կոնստրուկտիվ տեսակներ և միջոցներ
2. Միջմշակութային հաղորդակցության հմտություններ
3. Իրականության ստեղծագործական վերարտադրություն
4. Գեղարվեստական պատկերման յուրահատկություններ

22 **Ինչպիսի հիմնական հմտություններ և կարողություններ են ձևավորվում խմբային աշխատանքի ժամանակ**

1. Հեռանկարային ընկալման հմտություններ
2. Համագործակցային աշխատանքի հմտություններ
3. Ստեղծագործական երևակայության հմտություններ
4. Տարածության արտահայտման հմտություններ

23 **Ում նկարազարդումներով է հրատարակվել հայկական առաջին տպագիր Աստվածաշունչը**

1. Էժեն Դելակրուա
2. Շառլ Դյուպուի
3. Սանդրո Բոտիչելլի
4. Ալբրեխտ Դյուրեր

24 **Հայ արվեստագետներից ով է հանդիսանում իմպրեսիոնիստ նկարիչ**

1. Եղիշե Թադևոսյան
2. Մինաս Ավետիսյան
3. Ենոք Նազարյան
4. Ստեփանոս Ներսիսյան

25 **Հանրակրթական դպրոցում որը չի հանդիսանում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Թեմատիկ նկարչություն
2. Արվեստի տեսություն
3. Դիզայնի պատմություն
4. Պատկերում բնօրինակից

26 **Որտեղից է ծագել գոբելեն անվանումը**

1. Գոբելեն բնակավայրից
2. Գոբելեն թելատեսակից
3. Գոբելեն գույնից
4. Գոբելեն ազգանունից

27 **Ինչու են XVII դարի Հոլոնդիայի արվեստագետներին կոչել «Փոքր հոլանդացիներ»**

1. Փոքրաչափ նկարներ ստեղծելու համար
2. Սակավաթիվ նկարներ ստեղծելու համար
3. Փոքր բնակավայրերում ապրելու համար
4. Կարճահասակ լինելու համար

28 **Հունական ճարտարապետության մեջ որ կերպարներն էին կոչվում Ատլանտներ**

1. Այն արձանները, որոնք զարդարում էին պալատների նախասրահները, և հանդիսանում էին որպես հունական դիցարանի տարբեր աստվածների կերպարներ
2. Տղամարդկանց այն արձանները, որոնք բերվում էին հռոմեական կայսրությունից և տեղադրվում հունական ճարտարապետական կոթողներում՝ վերջինիս տալով հունահռոմեական ճարտարապետական ոճ
3. Տղամարդկանց այն արձանները, որոնք տեղադրվում էին սյուների փոխարեն և պահում էին շինության ծածկը, պատշգամբը, սյունասրահը
4. Տղամարդկանց այն արձանները, որոնք ունեին առնական կառուցվածք և զարդարում էին շինության տարածքը

29 **Կերպարվեստի որ տեսակին է պատկանում լինոփորագրությունը**

1. Գրաֆիկա
2. Խճանկար
3. Կոլաժ
4. Հարթաքանդակ

30 **Կերպարվեստ առարկայից ներկայացվող պահանջների համակարգը բաղկացած է**

1. 4 բաժնից
2. 6 բաժնից
3. 8 բաժնից
4. 2 բաժնից

31 **Հայազգի որ ճարտարապետն է վերականգնել Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) Սբ. Սոֆիայի տաճարի գմբեթը**

1. Մոմիկ
2. Դանիել
3. Տրդատ
4. Մանուել

32 **Որ ժամանակաշրջանի արվեստին է բնորոշ քրիստոնեական թեմաները**

1. Իմպրեսիոնիզմ
2. Վերածնունդ
3. Անտիկ
4. Ռոկոկո

33 **Ինչ է նշանակում «սֆումատո» տերմինը**

1. Մարդու և բնության կապը ու փոխհարաբերությունը կերպարվեստում
2. Մարդկային դիմանկարի հոգեբանական արտահայտությունը կերպարվեստում
3. Աստվածաշնչյան թեմաների պատկերազարդումը միջնադարյան եկեղեցիներում և ձեռագիր մատյաններում
4. Պատկերային ձևերի առանձնահատուկ որակ, մոդելավորման փափկություն, տոնային և ուրվագծերի նուրբ անցումներ, անորոշության, մշուշանման և թափանցիկության տպավորություն

34 **Որ արվեստագետը չի համարվում սյուրռեալիզմի ներկայացուցիչ**

1. Անդրե Բրետոն
2. Մաքս Էռնստ
3. Գուստավ Կլիմտ
4. Ռենե Մագրիտ

35 **Որտեղ է գտնվում Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» աշխատանքը**

1. Ֆլորենցիայի Պալացցո Վեկկիո
2. Միլանի Սանտա Մարիա դելլե Գրացիե տաճար
3. Ֆլորենցիայի Պալացցո Մեդիչի-Ռիկկարդի
4. Վատիկանի քրիստոնեական թանգարան

36 **ԽԻԿ համակարգը կիրառվում է**

1. Տարվա օրացուցային պլան կազմելիս
2. Գնահատման չափանիշներ կազմելիս
3. Ամփոփիչ հաշվետվություն կազմելիս
4. Դասի պլան կոնսպեկտ կազմելիս

37 **Պատկերում որոշակի կոլորիտի ստեղծումն ապահովվում է**

1. Գուներանգային հակադրությունների առկայությամբ
2. Երանգի նկատմամբ գույնի գերակշռությամբ
3. Միմյանց փոխլրացնող գույների շեշտադրմամբ
4. Լրացուցիչ գույների ներդաշնակությամբ

38 **Որոնք են ծիածանի գույները**

1. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագուն, մանուշակագույն, փիրուզագույն
2. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, սպիտակ
3. Կարմիր, դեղին, գազարագույն, մանուշակագույն, կանաչ, կապույտ, մոխրագույն
4. Կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն

39 **Կերպարվեստի դասավանդման առաջատար սկզբունք է համարվում**

1. Օպտիմալացումը
2. Նորարարությունը
3. Փորձարարությունը
4. Ձևնողականությունը

40 **Ինչպես է անվանվում գեղանկարչական այն ժանրը, որտեղ նատյուրմորտում բացի տվյալ ժանրին բնորոշ առարկաներից, պատկերված են լինում զանգ, գրքեր, սպանված թռչուններ**

1. Վանիտաս
2. Դիպտիխ
3. Բազիլիկ
4. Պանո

41 **Աշխատանքի գրագետ վերլուծության համար առաջնահերթ ինչպիսի կարողություններ պետք է զարգացնել**

1. Վերլուծական մտածողություն
2. Հաղորդակցական կարողություն
3. Հուզազգայական արտահայտում
4. Տեսողական ընկալում

42 **Ինչպես են միջազգային տերմինով թարգմանաբար կոչվում մարտանկարիչները**

1. Ֆովիստ
2. Տաշիստ
3. Դադաիստ
4. Բատալիստ

43 **Ով է Երևանի Խ. Աբովյանի անվան պուրակում տեղադրված Խ. Աբովյանի հուշարձանի հեղինակը**

1. Գետիկ Բաղդասարյան
2. Յուրա Մինասյան
3. Սուրեն Ստեփանյան
4. Արա Հարությունյան

44 **Ինչպես է անվանվում կենցաղային իրերի, թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կերպարվեստում**

1. Կոլաժ
2. Օֆորտ
3. Մոնոտիպիա
4. Էստամպ

45 **Ով է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի նկարազարդման հեղինակը (1963-1965 թթ.)**

1. Հակոբ Կոջոյան
2. Մինաս Ավետիսյան
3. Լևոն Մանասերյան
4. Գրիգոր Խանջյան

46 **Նշվածներից որն է համարվում ուսումնական խնդիր**

1. Տարածության արտահայտում
2. Կարողությունների ձևավորում
3. Երևակայության զարգացում
4. Բնօրինակից նկարչություն

47 **Ով է «Մտածողը» բրոնզաձույլ ստեղծագործության հեղինակը**

1. Օգյուստ Ռոդեն
2. Ժան Կարպո
3. Արիստիդ Մայոլ
4. Էմիլ Բուրդել

48 **Աշակերտների մոտ կերպարվեստային գործունեության ինչպիսի ընդունակությունների զարգացումն է ապահովում ինքնուրույն ստեղծագործական գործունեություն**

1. Գեղագիտական պահանջմունք
2. Ճնշողական վերաբերմունք
3. Իրապաշտական վերարտադրություն
4. Ստեղծագործական ընկալում

49 **Ով է Գյումրի քաղաքի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը**

1. Ղուկաս Չուբարյան
2. Արշամ Շահինան
3. Տարիել Հակոբյան
4. Արա Սարգսյան

50 **Առաջադրանքներ կազմելիս որը չի համարվում կարևորագույն գործոն**

1. Առաջադրանքի խնդիր
2. Առաջադրանքի տեսակ
3. Առաջադրանքի թեմա
4. Առաջադրանքի չափ

51 **Որ ճարտարապետն է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի հեղինակը**

1. Մարկ Գրիգորյան
2. Արթուր Մեսչյան
3. Ռաֆայել Իսրայելյան
4. Թորոս Թորամանյան

52 **Կերպարվեստի դասավանդման գործընթացում մանկավարժի գործնական ցուցադրումը օգնում է**

1. Աշակերտներին ցուցադրել մեթոդները
2. Աշակերտներին ուղղորդել ընդօրինակել
3. Աշակերտներին զերծ պահել սխալներից
4. Աշակերտներին սովորեցնել ճաշակ

53 **Ով է հին հունական դիցաբանության պանթեոնի օվկիանոսների աստվածը, ում նաև անվանում էին «Ծովի Աստված»**

1. Հերմես
2. Ապոլլոն
3. Պոսեյդոն
4. Զևս

54 **Ըստ առարկայական չափորոշչի և ծրագրի, նշվածներից որը ուսումնական գործընթացի տեսակ չէ**

1. Անհատական գործունեություն
2. Պատկերագրական գործունեություն
3. Խաղային գործունեություն
4. Խմբային գործունեություն

55 **Որ գեղանկարչի վրձնին է պատկանում «Իվան Ահեղն ու նրա որդի Իվանը» կտավը:**

1. Վասիլի Պոլենով
2. Իսահակ Լեվիտան
3. Իլյա Ռեպին
4. Վալենտին Սերով

56 **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների մակարդակ չէ**

1. Միջին մակարդակ
2. Հիմնական մակարդակ
3. Առավելագույն մակարդակ
4. Նվազագույն մակարդակ

57 **Որ դարի աշխատանք է համարվում Գառնու տարածքի բաղնիքի խճանկար Հատակը**

1. 2-րդ դար
2. 3-րդ դար
3. 4-րդ դար
4. 1-ին դար

58 **Ուսումնական նյութի ուսումնասիրությունը սովորողների համար հնարավորություն կընձեռի**

1. Զարգացնել ինքնուրույն գործունեություն իրականացնելու կարողությունները
2. Ինքնուրույն կազմակերպել սեփական ուսումնական գործընթացը
3. Ձևավորել գիտելիքները ինքնուրույն կիրառելու մոտեցումներ
4. Ինքնուրույն արտահայտել չափորոշիչային վերջնարդյունքները

59 **Որն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը**

1. Աշակերտների գիտելիքների ստուգում
2. Ուսումնառությունը պլանավորելու գործոն
3. Երևակայական մտածելակերպի զարգացում
4. Տեղեկատվության այլընտրանքային աղբյուր

60 **Որը չի համարվում ուսումնական գործընթացի պարտադիր պլանավորման գործոն**

1. Դասի պլան կոնսպեկտ
2. Առարկայական ծրագիր
3. Արտադպրոցական պարապունքներ
4. Տարվա օրացուցային պլան

61 **Որը չի հանդիսանում պուրակներում տեղադրված քանդակների նպատակ**

1. Գեղագիտական
2. Դաստիարակչական
3. Կիրառական
4. Ճանաչողական

62 **Որն է համարվում Մարտիրոս Սարյանի առաջին շրջանը**

1. Երազներ և հեքիաթներ
2. Հայկական բնաշխարհ
3. Վերացական պատկերներ
4. Արևելյան տեսարաններ

63 **Հանրակրթական դպրոցում նշվածներից որն է համարվում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Տարածության արտահայտում
2. Բնօրինակից նկարչություն
3. Երևակայության զարգացում
4. Կարողությունների ձևավորում

64 **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին ըստ իրենց գեղանկարչական ուղղությունների**

1. Պոլ Սեզան
2. Անրի Մատիս
3. Վինսենթ վան Գոգ
4. Ժորժ Սյորա

Էքսպրեսիոնիզմ ☐
Պուանտելիզմ ☐
Կուբիզմ ☐
Ֆովիզմ ☐

65 **Նշված տերմինները համապատասխանեցրեք իրենց բնութագրերին**

1. Գրիզայլ
2. Պլեներ
3. Էսքիզ
4. Ռեֆլեքս

Գեղարվեստական ստեղծագործության նախանկար ☐
Առարկայի վրա լույսի անդրադարձում ☐
Բացօթյա նկարչություն ☐
Մեկ գույնի տարբեր երանգներով կատարված աշխատանք ☐

66 **Համապատասխանացնել հեղինակներին ըստ իրենց հիմնադրած ժանրերի հայ կերպարվեստում**

1. Հակոբ Հովնաթանյան
2. Գևորգ Բաշինջաղյան
3. Զաքար Զաքարյան
4. Վարդգես Սուրենյանց

Դիմանկարի ժանր ☐
Նատյուրմորտի ժանր ☐
Բնանկարի ժանր ☐
Պատմական ժանր ☐

67 **Որ հայ նկարչի կեղծանունն է համապատասխանում նշված անուն ազգանունների**

1. Գառնիկ Զուլումյան
2. Հովհաննես Սեմերջյան
3. Գևորգ Գրիգորյան
4. Ոստանիկ Ադոյան

Զոտտո ☐
Արշիլ Գորկի ☐
Ժանսեմ ☐
Գառզու ☐

68 **Գտնել համընկումները**

1. Ձեռքով գործված ստեղծագործություն
2. Գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն
3. Գունավոր քարերով պատկերված ստեղծագործություն
4. Գունավոր, թափանցիկ ապակու կտորներով հորինվածք

Վիտրաժ ☐
Բատիկ ☐
Խճանկար ☐
Գոբելեն ☐

69 **Համապատասխանեցնել գրքերի նկարազարդման հեղինակներին ըստ իրենց աշխատանքների:**

1. Հակոբ Կոջոյան
2. Մարտիրոս Սարյան
3. Գրիգոր Խանջյան
4. Արա Բեքարյան

Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի» ☐
Եղիշե Չարենց «Երկիր Նաիրի» ☐
Ստեփան Զորյան «Հազարան բլբուլ» ☐
Ավետիք Իսահակյան «Աբու-լալա Մահարի» ☐

70 **Համապատասխանեցնել վերածնունդի շրջանի ստեղծագործությունները ըստ իրենց գտնվելու վայրի**

1. Լեոնարդո դա Վինչի «Տիրամայր Լիտտա»
2. Միքելանջելո Բուոնարոտի «Դավիթ»
3. Սանդրո Բոտիչելլի «Գարուն»
4. Ռաֆայել Սանտի «Սիքստինյան Տիրամայր»

Դրեզդենի հին վարպետների պատկերասրահ	☐
Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժ թանգարան	☐
Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա	☐
Ֆլորենցիայի Ուֆֆիցի պատկերասրահ	☐